Պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը
ա) ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը.
բ) հետևում է բաժնի պետի հանձնարարականների համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է բաժնի պետին.
գ) բաժնի պետին ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը, անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.
դ) իրականացնում է բաժնի պետի մոտ ընդունելության համար քաղաքացիների հերթագրումը.
ե) բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է աշխատակազմի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փասթաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները.
զ) բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է աշխատակազմի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

է) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ.
Բաժնի առաջին կարգի մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ :
*Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝*
ա) առնվազն միջնակարգ կրթություն.
բ) «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հանրային ծառայության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
գ) անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում
դ) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

**9. Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի /ծածկագիր 3.2-16/:**

Պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը
ա) կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները՝ժամանակին և պատշաճ որակով.
բ) ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը.
գ) հետևում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարականների համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է աշխատակազմի քարտուղարին.
դ) աշխատակազմի քարտուղարին ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը, անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.
ե) իրականացնում է աշխատակազմի քարտուղարի մոտ ընդունելության համար քաղաքացիների հերթագրումը.
զ) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է աշխատակազմի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները.
է) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է աշխատակազմի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.
ը) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ.
Առաջին կարգի մասնագետն ունի Օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:
*Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝*
ա) ունի առնվազն միջնակարգ կրթություն.
բ) ունի «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հանրային ծառայության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.
դ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

**10. Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի /ծածկագիր 3.2-17/:**

Պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը
ա) կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները՝ժամանակին և պատշաճ որակով.
բ) ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը.
գ) հետևում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարականների համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է աշխատակազմի քարտուղարին.

դ) աշխատակազմի քարտուղարին ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը, անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.
ե) իրականացնում է աշխատակազմի քարտուղարի մոտ ընդունելության համար քաղաքացիների հերթագրումը.
զ) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է աշխատակազմի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները.
է) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է աշխատակազմի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.
ը) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ.
Առաջին կարգի մասնագետն ունի Օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:
*Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝*
ա) Առնվազն միջնակարգ կրթություն.
բ)«Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հանրային ծառայության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
գ) Անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.
դ) Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:
**Մրցույթը կկայանա 2020 թվականի հոկտեմբերի 20-ին ժամը 10:00 -ին Հրազդանի համայնքապետարանի վարչական շենքում /ք.Հրազդան/:**
**Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար դիմող քաղաքացիները /փախստականի կարգավիճակ ունեցող անձինք/ պետք է ներկայացնեն՝**
**-դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/,**
**-տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի /ների/, վկայականի /ների/, աշխատանքային գրքույկի /վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին,**
**-արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի, կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք,**
**-1 լուսանկար՝ 3x4 սմ. չափսի,**
**-անձնագրի պատճենը:**
**Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով, կամ անձը հաստատող փաստաթղթով:**
**Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:00-18:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից, Հրազդանի համայնքապետարանում /ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս, Սահմանադրության հրապարակ,վարչական շենք, 5-րդ հարկ, աշխատակազմ , հեռ. /060/ 46-01-61/ և ՀՀ Կոտայքի մարզպետարանում / ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, Սահմանադրության հրապարակ, վարչական շենք, տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչություն , հեռ. /0223/ 2-34-13, 2-73-01/:**
**Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2020թ. հոկտեմբերի 05-ը ներառյալ:**

**11. Տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ-ճարտարապետ /ծածկագիր 2.3-4/:**
Պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը
ա) Իր կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի և նյութերի փորձաքննության ուղարկելու անհրաժեշտության մասին առաջարկություններ է ներկայացնում բաժնի պետին.
բ) Անհրաժեշտության դեպքում, բաժնի պետի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ, մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին.
գ) Անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.
դ) Իրականացնում է վերահսկողություն քաղաքաշինության բնագավառում՝ կառուցապատման ճարտարապետական նորմերին համապատասխան
ե) Իրականացնում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում է բաժնի պետին.
զ) Ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը.
է) Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:
Բաժնի գլխավոր մասնագետ-ճարտարապետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

*Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝*
ա) Բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, համայնքային ծառայության պետական և (կամ) համայնքային կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.
բ) «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հանրային ծառայության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Քաղաքաշինության մասին» օրենքների, քաղաքացիական, հողային օրենսգրքերի, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
գ) Անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում
դ) Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն :

**12. Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի բնակֆոնդի շահագործման և կոմունալ տնտեսության բաժնի գլխավոր մասնագետի/ծածկագիր 2.3-11/:**

Պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը
ա) Իր կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի և նյութերի փորձաքննության ուղարկելու անհրաժեշտության մասին առաջարկություններ է ներկայացնում բաժնի պետին.
բ) Անհրաժեշտության դեպքում, բաժնի պետի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ, մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին.
գ) Անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.
դ) Զբաղվում է ծրագրերի իրականացման գործընթացով
ե) Իրականացնում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում է բաժնի պետին.
զ) Ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը.
է) Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:
ը) Մասնակցում է համայնքի զինապարտների գրանցամատյանի օրենքով սահմանված կարգով վարման աշխատանքներին, նախապատրաստում և աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում առաջարկություն զինապարտների ցուցակների վերաբերյալ, ինչպես նաև ըստ բնակության վայրի հաշվառումից հանելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները տարածքային զինվորական կոմիսարիատ ներկայացնելու համար.
թ/ իր իրավասության սահմաններում մասնակցում է զորակոչի, զորահավաքի ու վարժական հավաքների կազմակերպման աշխատանքներին.
ժ/ իրենց պարտականությունները խախտած զինապարտ քաղաքացիների վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում անհապաղ տեղեկացնում է աշխատակազմի քարտուղարին.
ժա/ իր իրավասության սահմաններում մասնակցում է նախազորակոչային, զորակոչային տարիքի անձանց և պահեստազորայինների զինվորական հաշվառման բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց վերապահված լիազորությունների իրականացման աշխատանքներին:
Բաժնի գլխավոր մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

*Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝*
ա) բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, համայնքային ծառայության պետական և (կամ) համայնքային կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.
բ) «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հանրային ծառայության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
գ) անհրաժեշտ տեղեկատվությանը տիրապետում
դ) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
ե) ռուսերենին (ազատ) և մեկ այլ օտար (կարդում, կարողանում է բացատրվել) լեզվի տիրապետում:

**13. Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի /ծածկագիր 2.3-16/:**

Պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը
ա) կատարում է քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.
բ) իր կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի և նյութերի փորձաքննության ուղարկելու անհրաժեշտության մասին առաջարկություններ է ներկայացնում աշխատակազմի քարտուղարին.

գ) անհրաժեշտության դեպքում, քարտուղարի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ, մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին.

դ) անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում և քարտուղարին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

ե) իրականացնում է գնումների համակարգողի աշխատանքներ

զ) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Աշխատակազմի գլխավոր մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

*Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝*

ա) բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, համայնքային ծառայության պետական և (կամ) համայնքային կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.

բ) «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հանրային ծառայության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Գնումների մասին» օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ) անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.

դ) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

**Մրցույթը կկայանա 2020 թվականի հոկտեմբերի 20-ին ժամը 15:00-ին Հրազդանի համայնքապետարանի վարչական շենքում /ք.Հրազդան/:**

**Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար դիմող քաղաքացիները /փախստականի կարգավիճակ ունեցող անձինք/ պետք է ներկայացնեն՝**

**-դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/,**

**-տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի /ների/, վկայականի /ների/, աշխատանքային գրքույկի /վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին,**

**-արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի, կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք,**

**-1 լուսանկար՝ 3x4 սմ. չափսի,**

**-անձնագրի պատճենը:**

**Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով, կամ անձը հաստատող փաստաթղթով:**

**Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:00-18:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից, Հրազդանի համայնքապետարանում /ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս, Սահմանադրության հրապարակ,վարչական շենք, 5-րդ հարկ, աշխատակազմ , հեռ. /060/ 46-01-61/ և ՀՀ Կոտայքի մարզպետարանում / ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, Սահմանադրության հրապարակ, վարչական շենք, տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչություն , հեռ. /0223/ 2-34-13, 2-73-01/:**

**Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2020թ. հոկտեմբերի 05-ը ներառյալ:**

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# ՈՐՈՇՈՒՄ

*17 սեպտեմբերի 2020թվականի N 911*

## ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Համաձայն <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N190-Ն որոշումը՝*

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.Հրազդան համայնքի 2020 թվականի բյուջեի ծախսային մասում ՝ 4 բաժնի 5 խմբի 1 դասի 51 ծրագրի «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» /4239/ հոդվածում «1900.0» թիվը փոխարինել «3506,809.» թվով, «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» /4251/ հոդվածում «32630.0» թիվը փոխարինել «31547.19» թվով,«Հատուկ նպատակային այլ նյութեր» /4269/ հոդվածում «1800.0» թիվը փոխարինել «1276,001» թվով:*
*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*17 սեպտեմբերի 2020թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *ՈՐՈՇՈՒՄ*

*17 սեպտեմբերի 2020թվականի N 912*

## *ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՊԱՐՍՊԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հիմք ընդունելով «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված շինության հատակագիծը և Խանա Ջանունցի 2020 թվականի սեպտեմբերի 16-ի դիմումը.*

## *<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝</u>*

*1.Օրինական ճանաչել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի <<Մուշ>> 3-րդ փողոցի թիվ 55 տան բնակչուհի Խանա Հրանտի Ջանունցի կողմից Հրազդան քաղաքի Մուշ թաղամասի 3-րդ փողոց 55 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող (սեփականության իրավունքների գրանցման վկայական N 2602496, տրված՝ 2008 թվականի օգոստոսի 04-ին) բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցած 467.82 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը և 11.5քմ մակերեսով պարիսպը:*

*2.Սույն որոշման 1-ին կետում օրինական ճանաչված բնակելի տան օրինականացման վճարը սահմանել՝ 795300 (յոթ հարյուր իննսունհինգ հազար երեք հարյուր) դրամ, պարսպի օրինականացման վճարը սահմանել՝ 19550 (տասնինը հազար հինգ հարյուր հիսուն) դրամ և վճարել Հրազդան համայնքի բյուջեի թիվ 900125001504 գանձապետական հաշվին:*

*3.Կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չի ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չի քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:*

4.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:

5.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված գումարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

17 սեպտեմբերի 2020թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*17 սեպտեմբերի 2020թվականի N 913*

## *ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ բաժնի, հիմք ընդունելով <<ՀաբՇին նախագիծ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2020 թվականի հուլիսի 02-ին տրված տեխնիկական եզրակացությունը և <<ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի Վիլյամ Սարոյանի անվան N 11 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրեն Ք. Լևոնյանի 2020 թվականի սեպտեմբերի 09-ի հայտը.*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ*՝

*1. <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի Վիլյամ Սարոյանի անվան N 11 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը թույլատրել Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 14-րդ փողոց 14 հասցեում գտնվող կազմակերպությանը անհատույց օգտագործման տրամադրված (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական՝ N 10092020-07-0020, գաղտնաբառ՝ LRLZABWMWTMB) դպրոցի մարզադահլիճը վերակառուցել և վերանորոգել սանհանգույցը:*
*2.Վերակառուցման և վերանորոգման վերաբերյալ նախագծման թույլտվության (ճարտարապետա-հատակագծային առաջադրանքի) հիման վրա մշակել և ներկայացնել համաձայնեցման աշխատանքային նախագիծ:*
*3.Սույն որոշումն ուժի մեջ է նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ*՝ *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*17 սեպտեմբերի 2020թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*22 սեպտեմբերի 2020թվականի N 914*

## *ԱՆԺԵԼԱ ԺՈՐԱՅԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՔԱՆԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի բնակֆոնդի շահագործման և կոմունալ տնտեսության բաժնի պետի պաշտոնակատար Գևորգ Գրիգորյանի կողմից, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակից Արայիկ Մարգարյանի, ինչպես նաև Հրազդան համայնքի Կենտրոն թաղամասի 55 շենքի 33 բնակարանի բնակիչ Արթուր Բալյանի և նույն շենքի 34 բնակարանի բնակչուհի Լուսինե Հովհաննիսյանի ներկայությամբ 2020 թվականի օգոստոսի 28-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության հիման վրա: Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի բնակֆոնդի շահագործման և կոմունալ տնտեսության բաժնի պետի պաշտոնակատար Գևորգ Գրիգորյանի և համայնքապետարանի աշխատակազմի աշխատակից Արայիկ Մարգարյանի կողմից կատարած ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Կենտրոն թաղամասի 55 շենքի 32 բնակարանի բնակիչ Անժելա Ժորայի Մելքոնյանի կողմից Հրազդան համայնքի Կենտրոն թաղամասի 55 շենքի 32 բնակարանի մուտքի մոտ իրականացվել է շինության ինքնակամ կառուցում՝ վերելակի սպասարկման տարածքը փակել է քարերով, ցեմենտ-բետոնյա շարվածքով, և դրանով խոչընդոտել է մյուս հարևանների տեղաշարժը, ինչն առաջացնում է վարչական պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, այն է՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելը, որն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ*

թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը: Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերության համաձայն հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը: Իսկ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական, եթե կառույցը պահպանելը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը: Հարուցված վարչական վարույթի վերաբերյալ ծանուցվել է Անժելա Մելքոնյանը, ապահովվել է վերջինիս արտահայտվելու և լսված լինելու իրավունքը:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 5-րդ մասերով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 32-րդ հոդվածով, 154-րդ հոդվածի 1-ին մասով, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ղեկավարին կից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 18-ի ժամը 11:00-ի նիստի N 18 արձանագրությունը.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Անժելա Ժորայի Մելքոնյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակել տուգանք 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով:
2. Հանձնարարել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի պետին սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո կազմակերպել Անժելա Ժորայի Մելքոնյանի կողմից կառուցված ինքնակամ կառույցի քանդման աշխատանքները՝ ոստիկանության Հրազդանի բաժնի օժանդակությամբ՝ հասարակական կարգը պահպանելով:
3. Տուգանքի վճարումը կատարել սույն որոշման ստացման պահից 15-օրյա ժամկետում հետևյալ հաշվեհամարով՝ 900125001488:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անժելա Ժորայի Մելքոնյանին պատշաճ կարգով իրազեկելու հաջորդ օրը, և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ որոշման վերաբերյալ իրազեկվելու պահից երկամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

22 սեպտեմբերի 2020թ.
ք.Հրազդան